ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2019 թվականի N: 43-Ա ք.Գյումրի

ԱՐԿԱԴԻ ԱՆԴՐԻԱՍՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԷՆՐԻԿՈ ՄԱՏՏԵԻ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «թ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հունվարի 30-ի N:23-Ն որոշման հավելվածի 71-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2019 թվականի մարտի 5-ի N:3 որոշումը և Արկադի Անդրիասյանի 2019 թվականի մարտի 6-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2019 թվականի մարտի 11-ից դադարեցնել Արկադի Անդրիասյանի՝ «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատարի լիազորությունները և նրան նշանակել «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետով:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է